65. ԱՐՔՅ ՏՂԵՆ

Կէղնի, չէղնի ֆուխարա տղե մը կէղնի, ուրեն մեր մը։

Ավուրըմ մեկ էդ տղեն փողցի միջով կընցնի։ Սադրազամի կնիկ լե գլուխ թալեր էր փանջարից դուրս։ Գլուխ վի կվերցու օր աչք կառնե սադրազամի կնիկ, խոնջան կթուլնա։

Կդառնա կիգա տուն, կդնե մամու վրեն. «Էդա հ'իգամ, էդա էրթամ, զիմ մեջ ու սադրազամի կնկան կշինես, կէրթամ խեչ, կիգամ»։

Կնիկն կասե.— Լաո, դու ֆուխարե մ' իս քու հալու հետ, սադրազամի կնիկ հեչ քու հետ կնստի՞ ու կանի։

Շատ կզորե մամու վրեն, ճար կկտրի, կէլնի կէրթա, պառավ կնիկըմ կգտնա։

Կասե.— Պառավ, ի՞նչ կուզիս իտամ քզիկ, օր սադրազամի կնկան ու իմ տղի մեջ շինիս։

Պառավն կասե.— Թըզ էղնի, բան չըմ ուզի, ինչ օր տվեց։

Կէլնի, կէրթա սադրազամի կնկա մոտ, բարև կիտա ու կնստի։

Սադրազամի կնիկ կհարցու, կասե.—Հ'տրի՞ն իս էկի։

Կասե.— Խաթուն, իմ էրես սև է քու հ'առեջ, ֆլան պառվու տղեն էկեր է հ'ընցեր է, զքզիկ փանջարից տեսեր է, աչք հ'ընկեր է քի, էկեր եմ, օր զձըր մեջ շինիմ։

Սադրազամի կնիկ կասե.— Թըզ էղնի, գնա ասե հ'էսօր հ'իրկուն զիմ տեխ կթալիմ ֆլան տեխ, թըզ հ'իգա։

Հ'իրկուն օր կէղնի, կէլնի տղեն կէրթա։

Սադրազամի կնիկն է, գինա օր տղեն կիգա, կբերե ուր ցուցած տեխ զիրկա տեխ կթալե, զուր տեխ կթալե ուրիշ տեխ։

Տղեն կիգա, կափըլթըփե, օր էրթա վըր կնկա տեխեն, կնիկն կհ'իմնա հավար կէնե։ Կասե.— Մարդ, մարդ, հ'ելի մըր տուն գող է մտի։

Տղեն կփախնի, կմտնի թունդրան մեջ։

Սադրազամ կէլնի, կկպու զճրագ, կընկնի քունճ ու բուճախ, կիգա կտեսնա օր տղե մը մտուկ է թունդրան մեջ։

Կասե.—Տղա, ի՞նչ կէնիս հ'ոդի։

Տղեն կասե.—Էկեր իմ զքու թունդրան լենկ ու հ'երկենք կչափիմ, էրթամ քու թունդրան պես թունդիրըմ չինիմ։

— Դը,— կասե,— չափե, հ'ելի ու գնա։

Կչափե տղեն, կէլնի ու կէրթա։ Լուսուն կէլնի, ղպառավ ճամբե կիգա։

Կասե.— Գնա տես, էդ կնիկ զէդ բան հ'որի՞ էրեց իմ հետ։

Պառավն կէլնի կիդա։

Սադրազամի կնիկն կասե.— Էսօր թըղ հ'իգա, էլ հըմալ բան չըմ էնի, իմ տեխ լե ֆլան տեխն է թալուկ։

Հ'իրկուն կմթնե։ Տղեն կէլնի կիգա, գողտուկ զինկ լուսով կթալե սադրազամի տան դին կպատրվտի, հար կմթնի, կէլնի կէրթա։

Կէրթա օր կափըլթըփե, զկնկա տեխ կգտնա, կէրթա խեչ։ Կնիկ կկոահե, կբոռա, կասե.—Մարդ, հ'ելի, գող է մտի մըր տուն։

Օր կնիկ կբոռա, տղեն կփախնի, կէրթա կմտնի մարադ, կհանե զուր սաքոն, կփռե գետին ու կսազե գրկով հ'երդ քաշե, հ'ըլնա մեջ։

Սադրազամն է, կէլնի զճրագ կվառե ու կընկնի քունջ ու բուճախ։ Կիգա, կտեսնա օր ուր երեկվան տղեն է։ Կասե.—Տղա՛, էդ ի՞նչ կէնիս հ'ոդի։

Կասե.— Վալայի, էրկու տավար ունեք, քաղքեն նոր էկան, դարման չկեր հ'ըլնեք ուրանց հ'առեջ։ Ասի՝ հ'ու՞ր էրթամ, հ'ու՞ր չէրթամ՝ քիչըմ հ'երդ բերեմ, հ'ըլնամ իմ տավրրներու հ'առեջ, ասի՝ վալայի, կէրթամ սադրազամի մարզեն քիչըմ հ'երդ գողնամ, առնիմ հ'իգամ, սադրազամ տեսնա՝ բան լե չասե, էնդոր սիրտ լեն է։

Սադրազամ կասե.—Լաո, բոլ լից, բոլ։

Տղեն կըլնա ու կէլնի, շալկե զուր սաքոն, կիգա։

Լուսմութ կէլնի, մեկ լե ղպառավ կճամբե։

Սադրազամի կնիկ կասե.— Հ'էսօր թըղ հ'իգա, էլ հըմալ բան չըմ էնի, ես զինք կշրոբենք, տեսնեք էդ բանի տրկեն կառնե՞ր հ'ելներ։

Տղեն հ'իրկուն մեկ լե կելնի, կիգա։ Քիչըմ վախտով կիգա; զինք կթալե ներս, օր մթնե, հ'ելնի էրթա կնկա խեչ։

Սադրազամն է, օր կքնի, տղեն կելնի, կիգա կնկա մոտ։

Էդ օր լե կնիկ պառվուն ասեր էր՝ թըղ հ'իգա, ես թելըմ կկապիմ դռան սողնակ, մեկ գլուխ լե կտանեմ կապիմ իմ օտք, թըղ բռնե ու հ'իգա վըր իմ տեխին։

Տղեն ղթել կբռնե, կիգա, կիգա, զձեռք կթալե օր բռնե կնկա օտաց բրլակ, սադրազամի օտաց բրլակ ձեռք կընկնի։ Սադրազամ կ'հիմնա, հուշիկըմ կթալե զտղի ձեռք կբռնե։

Կասե.— Կնիկ, զճրագ վառե, գող է մտի մըր տուն։

Կնիկ կէլնի, զճրագ կվառե։

Սադրազամ կիշե, էդա մարդ, կասե.—Տղա, ի՞նչ կէնիս։

Տղեն կասե.—Սադրազամ բաբա, մենք քանի մը հ'ընկերով նստուկ ենք ֆլան տեխ, թախըմ մարդիկ ասին՝ սադրազամ թաք պ . . . ով է, ես ու ուրիշ հ'ընկերըմ ասինք՝ չէ, ջուխտակ պ . . է սադրազամին, շահաղ բռնիք, էկա կիշքեմ ու կէրթամ։

— Դը,— ասեց—իշե։

Տղեն իշեց ու թորկեց գնաց։

Լուսուն հ'ելավ ղպառավ ճամբեց, ասեց.—Գնա, տես էդի հ'որի՞ ղէդ օյոյիկ կէնե իմ գլուխ։

Պառավն հ'ելավ էկավ։

Սադրազամի կնիկ տեսավ, ասեց.—Գնա ուրեն ասե՝ ես զինք ջըռբեցի, նոր գիցա օր ինք հըմ արըֆ է, հըմ էրըֆ. գնա ուրեն ասե՝ թըղ հ'իդա։

Պառավն էկավ, տղին ասեց։

Ասեց.—Գացի ու էկա, ասեց. «Զինք ջըռբեցի, նոր գիցա օր ինք այըֆ ու էրըֆ է, մարդ օր տեսնա զմզիկ վիրարու, կառնա շուհաբ իտա, ես ուրն իմ, ինք լե իմն է, թըղ հ'ելնի հ'իգաս»։

Հ'իրկուն տղեն հ'ելավ գնաց։ Սադրազամի կնիկ զէրիկ քնցուցեր էր, ինք դրռ զարթուն էր, բացեց զդուռ, տղեն առավ ներս, գրկվան հ'իբար ու հար լուս պառկան։

Տղեն էլ սադրազամի կնիկն էրեց հ'ուրնով, հ'ըմնօր կէրթեր ու կիգեր։